



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/97/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

16 ապրիլի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Արմեն Մարությանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի ապրիլի 16-ին քննելով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Սամվել Եֆրեմի Աղասարյանի ընտանիքի անդամ Եֆրեմ Վլադիմիրի Աղասարյանի կողմից ներկայացված՝ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/97/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 26.1-րդ և

26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Սամվել Եֆրեմի Աղասարյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է Եֆրեմ Վլադիմիրի Աղասարյանի գույքային դրությունը, այդ թվում՝ նախկինում ներկայացված հայտարարագրերը, որի ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացրել է Հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

1) Եֆրեմ Աղասարյանին 2004 թվականի դեկտեմբերի 2-ից համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Տավուշի մարզ, [REDACTED] [REDACTED] հողամասեր (ընդհանուր 41,212 քմ), մինչդեռ վերը նշված անշարժ գույքերը հայտարարագրված չեն Եֆրեմ Աղասարյանի Հայտարարագրում:

2) ՃՈ-ից ստացված տվյալների համաձայն՝ Եֆրեմ Աղասարյանին 2006 թվականի մարտի 31-ից սեփականության իրավունքով պատկանում է GAZ 53A (1983թ.) մակնիշի բեռնատար տրանսպորտային միջոցը, մինչդեռ այն հայտարարագրված չէ Եֆրեմ Աղասարյանի Հայտարարագրում:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի ապրիլի 2-ին Եֆրեմ Աղասարյանին հասցեագրել է թիվ 01/1339-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 15:30-ին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը 15:30-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Եֆրեմ Աղասարյանը ստացել է 2025 թվականի ապրիլի 9-ին (հիմք՝ AL0127344445AM ծանուցագիր):

1.3 2025 թվականի ապրիլի 14-ին պատշաճ ծանուցված Եֆրեմ Աղասարյանի բացակայությամբ, կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ

ՎԻՎ/57/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Եֆրեմ Աղասարյանի բացակայությամբ 2025 թվականի ապրիլի 16-ին, ժամը՝ 15:30-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Վարույթի մասնակից Եֆրեմ Աղասարյանը Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը. «Հայտնում եմ Ձեզ, որ 09.04.2025թ-ին ստացել եմ Ձեր 02.04.2025թ-ի թիվ 01/13339 գրությունը, որի կապակցությամբ հայտնում եմ, որ գրության մեջ տեղ գտած անամապատասխանությունները կապված են եղել հայտարարագիրը լրացնելու կարգի չիմացության հետ և դրանք ուղակի վրիպակներ են, ինչը դեռևս 2024թ-ի հայտարարագրում մեր կողմից արդեն իսկ շտկվել են: Մասնավորապես՝ 2004թ-ի դեկտեմբերի 2-ից համատեղ սեփականության իրավունքով Տավուշի մարզի [REDACTED]

հողամասերը ներկայացված են եղել 2023թ-ի հայտարարագրում, սակայն դրանք ներկայացված են եղել միասնական տեսքով՝ մեկ կադաստրային կոդով, ավելի հստակ՝ առանձին առանձին չի նշվել, սակայն նշվել է ընդհանուր մակերեսը: Ճիշտ է հայտարարագրում նշված չէ Ձեր կողմից նշված 5 հողամասերը, սակայն դրանց ընդհանուր մակերեսը նշվել է մեկ կադաստրային կոդի տակ, ինչը պայմանավորված է եղել հայտարարագրի լրացման կարգին ամբողջությամբ չտիրապետելուն, սակայն սեփականության իրավունքով պատկանող բոլոր անշարժ գույքը ճշտությամբ լրացված է՝ ըստ ընդհանուր մակերեսի: Ամեն դեպքում, եթե հողամասերն ըստ առանձին կադաստրային կոդով հայտարարագրվել, ապա միևնույն է ընդհանուր մակերեսի փոփոխություն չէր լինելու:

Ինչ վերաբերում է 2006թ-ի մարտի 31-ից սեփականության իրավունքով պատկանող «ԳԱՁ 53Ա» (1983թ.) մակնիշի բեռնատար տրանսպորտային միջոցին,

ապա հայտնում եմ, որ դեռևս 2013թ-ի դեկտեմբերի 18-ին, ըստ ինձ խոտանման նպատակով, մեքենայի հաշվառման համարանիշները հանձնվել են ոստիկանություն, սակայն հավանաբար փաստաթղթերի ձևակերպման, կամ մեր կողմից հանգամանքները ոչ ճիշտ ներկայացնելու պատճառով, մեքենան իրականում չի խոտանվել, այլ ժամանակավորապես հաշվառումից հանվել է ու ես վստահ եմ եղել, որ մեքենան խոտանված է, քանի որ այն պահեստամասերի է վերաժվել և մաս-մաս վաճառված է: Ներկայումս նշված մեքենան գոյություն չունի: (...)»:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/97/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Սամվել Եֆրեմի Աղասարյանի ընտանիքի անդամ Եֆրեմ Վլադիմիրի Աղասարյանը հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Եֆրեմ Աղասարյանին 2004 թվականի դեկտեմբերի 2-ից համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Տավուշի մարզ, [REDACTED] [REDACTED] հողամասեր (ընդհանուր 41,212 քմ), մինչդեռ վերը նշված անշարժ գույքերը հայտարարագրված չեն վերջինիս Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում:

3.3 ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ Եֆրեմ Աղասարյանին 2006 թվականի մարտի 31-ից սեփականության իրավունքով պատկանում է GAZ 53A (1983թ.) մակնիշի բեռնատար տրանսպորտային

միջոցը, մինչդեռ այն հայտարարագրված չէ Եֆրեմ Աղասարյանի Հայտարարագրի «Բ.2. Տրանսպորտի միջոց» բաժնում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույք:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտի միջոցը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային, երկաթուղային փոխադրամիջոցը: Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ-ը, կամ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները:

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույք հայտարարագրելիս նշվում են անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու

սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը:

4.5 Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ տրանսպորտի միջոցի հայտարարագրելիս նշվում են տրանսպորտի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, նույնականացման համարը, ձեռք բերելու տարին և եղանակը:

4.6 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող **հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է Եֆրեմ Աղասարյանի կողմից, հայտարարագրման ենթակա համապատասխան տվյալը Հայտարարագրում չներկայացնելու արդյունքում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն

գբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Սույն գործով ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Սամվել Եֆրեմի Աղասարյանի ընտանիքի անդամ Եֆրեմ Վլադիմիրի Աղասարյանը Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է.

1) Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում Եֆրեմ Աղասարյանը չի հայտարարագրել համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Տավուշի մարզ, [REDACTED] հողամասեր (ընդհանուր 41,212 քմ), որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջը:

2) Հայտարարագրի «Բ.2. Տրանսպորտի միջոց» բաժնում Եֆրեմ Աղասարյանը չի հայտարարագրել սեփականության իրավունքով իրեն պատկանում է GAZ 53A (1983թ.) մակնիշի բեռնատար տրանսպորտային միջոցը, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջը:

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը արձանագրում է, որ Եֆրեմ Աղասարյանի կողմից Հայտարարագրում իրեն պատկանող հողամասերի և տրանսպորտի միջոցի վերաբերյալ տվյալները չհայտարարագրելու պայմաններում հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել վերջինիս՝ որպես հայտարարատու անձի գույքային դրության մասին, ինչը վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարական շահը:

Անդրադառնալով 1-ին խախտման առնչությամբ Եֆրեմ Աղասարյանի կողմից ներկայացված գրավոր պարզաբանմանը՝ համաձայն որի վերջինիս համատեղ սեփականության իրավունքով պատկանող Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Աղավնավանք գյուղում գտնվող 5 հողամասերը Հայտարարագրում ներկայացված են

եղել միասնական տեսքով՝ մեկ կադաստրային կողով, Հանձնաժողովն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ Հայտարարագրի «Բ.1.1. Տվյալ տարվա սկզբում առկա անշարժ գույք» և «Բ.1.3. Տվյալ տարվա վերջում առկա անշարժ գույք» բաժիններում հայտարարագրված է միայն «11-007-4-1» հաշվառման համարով Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Աղավնավանք 2-2 փակուղի տուն 4 հասցեում գտնվող անշարժ գույքը, մինչդեռ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 16.10.2024 թվականի թիվ ՍԹ/17067-2024 գրությամբ ներկայացված տվյալների համաձայն՝ բացի նշված հաշվառման համարով անշարժ գույքից Եֆրեմ Աղասարյանին սեփականության իրավունքով պատկանում են ևս թվով 5 հողամասեր, մասնավորապես՝ Տավուշի մարզի Դիլիջան համայնք, գյուղ Աղավնավանք հասցեում գտնվող 0.2125 հա «11-007-0024-0006» հաշվառման համարով (բնակելի կառուցապատման), 1.8897 հա՝ «11-007-0203-0010» հաշվառման համարով, 0.695 հա՝ «11-007-0203-0011» հաշվառման համարով, 1.0327 հա՝ «11-007-0101-0011» հաշվառման համարով և 0.2913 հա՝ «11-007-0104-0022» հաշվառման համարով հողամասերը, որոնք հայտարարագրված չեն:

Անդրադառնալով 2-րդ խախտման առնչությամբ Եֆրեմ Աղասարյանի կողմից ներկայացված գրավոր պարզաբանմանը՝ համաձայն որի վերջինիս սեփականության իրավունքով պատկանող «ԳԱԶ 53Ա» (1983թ.) մակնիշի բեռնատար տրանսպորտային միջոցը ժամանակավորապես հաշվառումից հանվել է, Հանձնաժողովն արձանագրում է, որ այն ևս հիմնավոր չէ, քանի որ ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության կողմից 08.10.2024 թվականի թիվ ՄԳ/211238-24 գրությամբ տրամադրված տվյալների համաձայն՝ Եֆրեմ Աղասարյանին 2006 թվականի մարտի 31-ից սեփականության իրավունքով պատկանում է GAZ 53A (1983թ.) մակնիշի բեռնատար տրանսպորտային միջոցը, որի կարգավիճակը նշված է «Գործող» և այդ տրանսպորտային միջոցը հաշվառումից հանված կամ խոտանված լինելու վերաբերյալ ՀՀ ՆԳՆ կողմից տեղեկատվություն չի ներկայացվել:

Բացի այդ պետք է փաստել, որ նշված հողամասերի և տրանսպորտի միջոցի վերաբերյալ չհայտարարագրված տվյալները որևէ այլ կերպ բացահայտված չեն Եֆրեմ Աղասարյանի Հայտարարագրում:

Ամփոփելով վերոնշյալը և հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Եֆրեմ Վլադիմիրի Աղասարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և

պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում
պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Եֆրեմ Վլադիմիրի Աղասարյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Եֆրեմ Վլադիմիրի Աղասարյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ